

# ՊԱՆԳԵՉՈՒԿ

№ 25 (7189)

10 ՀՈՒՆԻՍԻ 1993 թ.

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ

ՀԻՆՉՍԱԲԹԻ

Օ Ր Ը

ԳԻՆԸ՝ 8 ՌՈՒՒԼԻ

ԳՈՐԻՍԻ ԾՐՋԱՆԻ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ Թ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է 1994 ԹՎԱԿԱՆԻՑ

ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՍԻՍԻԱՆՈՒՄ

## ԱՅՈՒՆԻՔԸ ԶԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՈՐՊԵՍ

### ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 10-ին Սիսիանում, ՀՀ պետնախարար Կ. Սարգսյանի նախագահությամբ տեղի ունեցավ տարածաշրջանային խորհրդակցություն, որին մասնակցում էին պատգամավորների շրջանային, քաղաքային խորհուրդների գործկոմների նախագահներ, փոխնախագահներ, շրջանային դատախազներ, ԵԳ բաժինների պետեր, զինվորական կոմիսարներ, բանկային, հարկային, էներգետիկ համակարգերի ղեկավարներ:

Քննարկվեց 1993 թ. գարնանային գորակոչի ընթացքը, որի վերաբերյալ հաղորդումով հանդես եկավ ՀՀ պետնախարարի օգնական Կ. Հովհաննիսյանը, ելույթ ունեցան շրջանների զինվորական կոմիսարները: Եզվեց, որ գարնանային գորակոչը տարածաշրջանում ընթանում է կազմակերպված, կարևոր միջոցառման համընդհանուր գիտակցման պայմաններում: Այդուհանդերձ, որոշ երիտասարդներ խուսափում են քաղաքացիական իրենց պարտքը կատարելուց: Վկայակոչվեցին կոնկրետ փաստեր և անուններ ըստ շրջանների: Ընդգծվեց, հատկապես, այն դեպքը, երբ զինակոչային տարիքի երիտասարդները գորակոչից խուսափելու համար առանց զինկոմներից իրազեկելու, փոխում են իրենց մշտական բնակավայրը:

Խնդիր դրվեց մինչև ս/թ. հունիսի 20-ը՝ ծնողների, մերձավորների միջոցով, ապահովել նրանց վերադարձը հիմնական բնակավայրեր և ներկայությունը զինվորական կոմիսարիատներ:

Ամփոփելով հարցի քննարկումը, Կ. Սարգսյանը կոչ արեց պատգամավորների տեղական խորհուրդներին, իրավապահ մարմիններին, զինկոմիսարիատներին, աշխատավորական կոլեկտիվներին ու հասարակական կազմակերպություններին՝ գորակոչն այսուհետև ևս պահել ուշադրության կենտրոնում:

— Հայոց բանակի կազմավորման հարցում ոչ մի պատճառով անտեղի և անհարկ արգելափակումներ կան: Զորակոչից անտեղի արգելափակումներ կան միայն այն դեպքերում, երբ անհատը չի կատարել իր պարտքը: Զորակոչից անտեղի արգելափակումներ կան միայն այն դեպքերում, երբ անհատը չի կատարել իր պարտքը: Զորակոչից անտեղի արգելափակումներ կան միայն այն դեպքերում, երբ անհատը չի կատարել իր պարտքը:

վաճակներ և նրանց, նրանց ընտանիքների նկատմամբ կիրառվելու պատժամիջոցներ:

Պետնախարարը շնորհակալություն հայտնեց տարածաշրջանի զինվորական կոմիսարներին և նրանց, որոնք կազմակերպման հարցում գորակոչից աշխատանք կատարելու համար, յուրաքանչյուրին պարգևատրելով 30 հազար ռուբլի գումարով:

Քննարկման որված հաջորդ

հարցն առնչվում էր հանրապետության կյանքի դժվարին բնագավառներից մեկին՝ էներգետիկ համակարգին, ս/թ. մայիսի 21-ին տարածաշրջանային խորհրդակցությունում ընդունված «ՀՀ Սյունիքի տարածաշրջանային էներգահամակարգում տիրող վիճակի և գործունեության բարելավման մասին» որոշման կատարման ընթացքին: ՀՀ պետնախարարի աշխատակազմի կողողիմատոր Լ. Դինգլյանի հաղորդման մեջ, ինչպես և ելույթներում նշվեց, որ նախորդ խորհրդակցությունից հետո ճյուղում նկատվում է աշխատանքների բարելավման, դեբիտորական պարտքերի կրճատման միտում: Այդ ընթացքում մարվել է մոտ 300 մլն ռուբլու պարտք: Դժվարությունները, չնայած դրան, շարունակում են տեղ գտնել: Դանդաղ են իրագործվում վճարումները, առկա է ավելի քան 400 մլն ռուբլու դեբիտորական պարտք: Հատկապես էներգիայի 58,95 %-ի դիմաց անցած ամսում վճարումներ չեն կատարվել:

Խոչընդոտներ կան էլցանցը ձմեռացմանը նախապատրաստելու գործում: Խորհրդակցությունում արտահայտվեց այդ խնդիրների աստիճանական լուծման, ինչպես նաև ցանցային շրջանների կարգավիճակը քննարկելու, ամուսն դաշտային աշխատանքների ընթացքում ջրհան կայաններից անխափան էլեկտրիկ մատակարարելու օգտին: Կարևորվեց այս հարցում բնակչության գիտակից վերաբերմունքի ձևավորումը: Եվ կենցաղում, և՛ արտադրության մեջ պետք է օգտա-

գործել այնքան էլեկտրիկ, ինչքան հնարավոր է վճարել:

Նպատակահարմար գտնվելով ոչ պետական սեկտորին տրվող էլեկտրիկայի բաշխման հարցը կրկին վերադարձնել շրջանային, քաղաքային խորհուրդների գործկոմների ղեկավարներին:

Որոշվեց տարածքային օպերատիվ շտաբը վերանվանել էներգետիկ հարցերի հանձնաժողով:

Խորհրդակցությունում քննարկվեց նաև տարածաշրջանի բանկային համակարգում տիրող իրավիճակը և՛ այն բարելավելու միջոցառումներ: Դրա մասին հարցը: Դրա վերաբերյալ հաղորդումով հանդես եկավ ՀՀ պետնախարարի աշխատակազմի անդամների Գ. Մարգարյանն ու Ռ. Դավթյանը: Նրանք, նաև ելույթ ունեցողները, նշեցին բանկերում վճարումների հերթականության ապահովման, կանխիկ դրամի շրջանառության ճիշտ կազմակերպման, վարկերի նպատակային օգտագործման կարևորությունը, հարկային տեսչությունների աշխատանքների կատարելագործման, թաքցված հարկերի, հարկվող սուբյեկտների հայտ բերման անհրաժեշտությունը:

ՀՀ պետնախարար Կ. Սարգսյանն արտահայտվեց բնագավառում հիմնավոր ուսումնասիրություններ անցկացնելու, բանկային աշխատանքների դժվարությունները համատեղ ջանքերով հաղթահարելու մասին: Բանկային համակարգը պետք է լինի մեկնաբարոյակամը, ասաց նա: Միջնդեռ այն մնում է մեր կյանքի մուտք անկյուններից մեկը:

Խորհրդակցությունում քննարկվեցին նաև մի շարք ընթացիկ հարցեր: Որոշվեց, մասնավորապես, ՀՀ պետնախարարին կից ստեղծել պատգամավորների շրջանային, քաղաքային խորհուրդների գործկոմների նախագահների խորհուրդ՝ ընթացիկ աշխատանքների կողողիմացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Խորհրդակցության աշխատանքները հետարձակվում էր ռադիոցանցով՝ ամբողջ տարածքում:

ՍԵՓ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՎՏԱՆԳԸ ԴԵՌ ԶԻ ԱՆՑԵԼ

Վերջին օրերին քաղաքում և գյուղերում խոսակցություններ են պատվում տարածված դիզենտերիայի, խմելու ջրի աղտոտվածության մասին: Ինչքանով են դրանք համապատասխանում իրականությանը, արդյո՞ք դա է տասնյակ մարդկանց հիվանդանալու պատճառը, ինչպիսի եզրակացության է հանգել խնդրո հարցով Գորիս ժամանած մասնագիտական խումբը:

«Չանգեզուրի» աշխատակից Գրիտա Գրիգորյանն այս հարցերով դիմեց Գորիսի շրջանի պետական սանիտարահիգիենային ծառայության բժիշկ Ա. Անահիտ Պետրոսյանին: Ներկայացնում ենք գլխա-

ԴԻԶԵՆՏԵՐԻԱ

վոր բժշկի պատասխանը: — Պատվող խոսակցություններն անհիմն չեն: Արձանագրված աղիքային հիվանդության պատճառը Գորիս քաղաքը սնող աղբյուրի երկրորդային աղտոտումն է (այն կարող է առաջանալ անձրևաջրերից, կրաֆիկով ջրի մատակարարումից, երբ ժանգոտ ջուրը հետհոսք է կատարում):

Բուժօգնության են դիմել դիզենտերիայով հիվանդ 110 մարդ: Հիվանդանոցում պատվել և բուժվում է 63 հոգի, որից 32-ը՝ մահուկներ: Մահացու դեպք չի արձանագրվել: Հիվանդություններն ան-

ցել են միջին ծանրությամբ և թեթև: Այսօր շրջհիվանդանոցի և սանէպիդկայանի ամբողջ բուժանձնակազմը կատարում է բակային համայցեր՝ հիվանդության դեպքերն արձանագրելու նպատակով:

Ի որպիսություն, նկատվում է դեպքերի նվազեցում: Հիվանդները գտնվում են տնային ստացիոնար պայմաններում՝ բժշկի հսկողության տակ:

Դեպքի կապակցությամբ Գորիս են ժամանել Հայաստանի Հանրապետության պետական սանիտարական գլխավոր բժիշկ Արարատ Մկրտչյանը, առողջապահության նախարարության սանհիտարահիգիենային կային վարչության պետ Մանվել Մանրիկյանը, մանրէաբաններ, համաճարակաբաններ: Տեղում կազմվել է միջոցառումների արագ ներգործման ծրագիր: Բյուրացվել են բոլոր կետերը, օրվա կարգավորիչ ջրավազանները: Սակայն դեռևս ջրի մանրէաբանական կազմը չի համապատասխանում պետական նորմաներին:

Ուստի խորհուրդ է տրվում բնակչությանը ջուրը օգտագործել միայն եռացնելուց հետո:

Խոստանում ենք խոսակցությունը շարունակել, բնակչությանն անընդհատ իրազեկել ջրի որակի և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների մասին:

ԱՐՁԱԳՆԵՔ

### ՎԻՐԱՎՈՐՎԵԼ Է ՄԵՐ ԱՐԺԱՆԱԳԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գորիսի թիվ 3 պայմանագրային գումարտակի 3-րդ դասակի մարտիկները և կարողով «Չանգեզուր» թերթի 1993 թ. մայիսի 27-ի համարում տպագրված «Մահ չախտի ճաշակեմ»

հոդվածը, գտնում ենք, որ դրանում Կոնցիժորին առնչվող հատվածը չի համապատասխանում իրականությանը:

ՍԵՅՐԱՆ ԳՍԼՍՅԱՆ՝

դասակի / հրամանատար

ՍՍՏԱՐ Է ԿՆԵՆՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԸ

Աղբբեջանից, Արցախից տեղահանված բնակիչներին այս անգամ օգնության ձեռք մեկնեց Կառմիր խաչի բնկերությունը: Ներկայացնելով իրենց անձր հաստատող և բրունգազարվածի կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, նրանցից յուրաքանչյուրը ստացավ սենդամբերի 20 կիլոգրամանոց ծանրոց և մեկական ծածկոց: Ինչպես վկայեց Կառմիր խաչ բնկերության ներկայացուցիչ Ներսես Գալստյանը, օգնություն կառվի նաև սանհիգիենային գյուղերի բնակիչներին՝ ըստ շրջաբերդի ներկայացրած ցուցակների:

ՀԱՄԱՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է ՀԱՆՍՊԱՐԶՆԵՐԻ ՇԱՀՄԱՐՈՒՄ

ՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ: ՊԵՏ ԳՍՈՒՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ:

ՍՅՈՒՆԻՔ. ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ



— Պարոն հայրուհի, ե՞րբ է ստեղծվել տարածաշրջանի վարչությունը, ո՞ւմ կողմից և ո՞ր շրջաններն են ընդգրկված տարածում:

— Սյունիքի սոցիալ-տնտեսական գոտում ղեկավարվող ՆԳ վարչությունը ստեղծվել է 1992 թ. նոյեմբերին, 22 ՆԳ նախարարության կողմից:

Վարչության անմիջական ենթակայության են հանձնվել Կապանի, Գորիսի, Սիսիանի, Մեղրու, այս տարվա ապրիլից՝ նաև Վայքի, Եղեգնաձորի շրջանների, Ջերմուկ քաղաքի ներքին գործերի բաժինները:

— Իսկ մինչև հիմա կազմավորվում չի ավարտվել: Շատ է դանդաղում կարծում եմ:

— Վարչության ձևավորումը չափեր է դիտել սոսկ մեխանիկական պրոցես: Դա կառավարման նոր օղակի ձևավորում է՝ իր ներքին կառուցվածքային ստորաբաժանումներով, դա ներառելով խտանալի մշակում է, կադրերի ընտրության պրոցես, շրջ, բնականաբար, անհատականության է հասցնելու:

Մենք բավականին պրոֆեսիոնալ կադրերի պակասի հետ ափսոսելով 30 մարդ պետք է ընդգրկվեն վարչությունում: Գրեթե Գորիս գալու և այստեղ աշխատել ցանկացողները քիչ են. պատճառաբանում են պատերազմական իրավիճակը, բնակարանային և մյուս կենցաղային, ընտանեկան խնդիրները: Այդուհանդերձ, այսօր վա գրություններ մոտ 80 տուկոսով համարվել է վարչության անձնակազմը:

Չգնա՞ման պատճառ էր վարչության աղմուկստորափուլ շենքի բացակայությունը: Այդ հարցը ևս լուծվել է, մինչև ամսվա վերջ կտեղափոխվեն նոր շենք:

— Մի ևս մի խոսք, երբ գաղտնիք չէ, վարչության ներքին կառուցվածքի մասին:

— Վարչությունը ղեկավարում է սիսիանի շրջանի տեղակալով և ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները: Կազմ-վերլուծական խումբ, քրեական բաժանմունք, ՊՈՒՊ բաժանմունք, նարկոթիզմի ու թմրամոլության գծով ծառայություն, քննչական բաժին, հետաքննության ծառայություն, հասարակական կարգի պահպանման խումբ, կադրերի խումբ, փորձագիտական խումբ՝ լաբորատորիայով, օպերատիվ կապի և տեխնիկայի խումբ, արագ հակահրդեհության ջոկատ և այլն:

— Ինչո՞վ եմ առաջնորդ-

վում, ո՞րն է համարում զրկավար, սկզբունքայինը կադրերի բնութագրում և տեղադրման գործում:

— Կադրերի ընտրությունը շտաբանից պատասխանատու խնդիր է: Յուրաքանչյուր զեկվում ցուցաբերում ենք անհատական մոտեցում: Ծառայության ենք ընդունում Հայաստանի Հանրապետությանը նվիրված 22 քաղաքացիներին, ովքեր փրենց գործնական, քաղաքական հատկանիշներով, պատրաստակամությամբ և առողջական վիճակով կարող են ապահովել հասարակական կարգի պահպանությունը, հաջողությամբ պայքարել հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ:

Շատ կարևոր է կադրերի պրոֆեսիոնալիզմը՝ գիտելիքները, հմտությունը, փոր-

վում է: Անցած հինգ ամսվա արդյունքները ի՞նչ կարող են մեզ հուշել այդ առնչությամբ:

— Կյանքն ապացուցեց, որ տվյալ սոցիալ-տնտեսական ղեկավարում ՆԳ բաժինների գործունեության կոորդինացումը անհրաժեշտություն է: Դա նպաստում է և հանցագործությունների դեմ տարվող պայքարին, և առկա միջոցների համալիր օգտագործմանը, և գործողությունների կոորդինացմանը: Շատացել է ՆԳ բաժիններին ցույց տրվող պրակտիկ օգնությունը: Ունենք լրացուցիչ ուժեր, որ կարող ենք երկու-երեք ժամվա ընթացքում հասցնել զեկվոր վայր և ծառայական օգնություն ցույց տալ բաժիններին: Կազմակերպ աշխատանքային ցուցանիշների համար յուրօրինակ մի մըր-

բում անցկացված խորհրդակցությունը, որին մասնակցում էին ՆԳ վարչությունների ղեկավարները:

Տարածքային ՆԳ վարչությունների նպատակահարմարությունն այսօր ընդունում են նույնիսկ նրանք, ովքեր երեկ մերժում էին այն:

— Մինչև վերջին ժամանակներ, երբ դեռ տարածում չէին տեղակայվել զինվարական ստորաբաժանումներ, սահմանների պաշտպանությանն առնչվող խնդիրներ լուծվում կամ կոորդինացվում էին ՆԳ բաժինների կողմից: Հիմա պատկերն այլ է: Կարելի է ենթադրել, որ միլիցիան ձեռքբերված է լրացուցիչ պատրաստություններով, հոգսերից և ըզբաղված է միմյանց իր մասնագիտական խնդիրներով:

— Տարածքում տեղակայվել

ենդ տվեց, երբ բաժնում նշանակվեց նոր պետ, երբ ձեռնարկվեցին մի քանի օպերացիաներ: Ինչպե՞ս եմ չա բացատրում:

— Ինքս էլ ողջունել եմ Արտ Ղահրամանյանի նշանակումը և ուրախ եմ, որ քաղաքացիական պատգամավորները նույնպես լավ են ընդունել դա. ուրեմն ճիշտ է կատարվել ընտրությունը:

Ինչ վերաբերվում է քաղաքացիական ՆԳ բաժին նախկին փոխհարաբերությանը, հետևյալը կասեմ: Ինքներդ

լավ գիտեք, որ քաղաքացիական նման հարցերին հաճախ մոտեցել են քաղաքական նրկատառումներով:

Քանիցս նստաշրջանում խոսք է եղել միլիցիայի մասին, բայց ոչ մի անգամ չեն վկայակոչվել փաստեր, տեղեկություններ, վերլուծություններ: Եվ հնա-

զանդ մեծամասնությունը քվեարկում էր խոսնակի աչքերին ու ձեռքերին նայելով: Ըստ երևույթին նման մարդկանց ձեռնտու էր միլիցիային, դատախազությանը թուլացնել՝ անընդհատ քննադատելով, վարկաբեկելով և ոչ մի գործնական օգնություն ցույց չտալով:

Վերջերս նույնիսկ իրավապահ մարմիններին վերաբերող հարցերը քննարկման էին դրվում՝ իրավական հանձնաժողովին շրջանցելով, որը կանոնակարգի կոպիտ խախտում է: Նման կերպ ընդունված որոշումները չէին կարող իրավական հետևանքներ ունենալ:

Շատ եմ ցանկանում, որ գոնե այսուհետև գործերին ու կադրերին նայենք առանց կոստակցական, քաղաքական ակնոցների: Քայքայախաբար քաղաքացիական պատգամավորների մի զգալի մասն այսօր այդ հայեցակետն ունի:

— Իսկ պարոն Ղահրամանյանը՝ Գորիսի ՆԳ բաժնի պետը, հետագա աշխատանքի համար համաձայնություն պետք է ստանա՞ տեղական երկու խորհրդում: Պատրաստվո՞ւմ եմ այդ առթիվ առաջարկություններ կայացնել խորհուրդներ:

— Կվարվենք օրենքով սահմանված կարգով:

— Պարոն հայրուհի, քերթային մեկ գրույցում հնարավոր չէ ֆ և և ա ր կ ե լ մտահոգող բոլոր հարցերը: Սակայն մի քանի հարց, այնուամենայնիվ, չեն կարող շրջանցել: Ճանապարհների վիճակը նկատի ունեմ, նախ և առաջ: Ի՞նչ երաշխիք կա, որ մարդիկ նահապարհներին չեն քայլանվի, չեն կողոպտվի: Ինչպե՞ս կհասկացա ի՞նչ առաջ ձեռնեցամ հեռախոսային խոսակցությունից, այս պահին Մեղրիկապան ավանում աշխատում 65

—94 պետհամարանիշի «Նիվա» մեկնայով մի խումբ անձինք անարկելում են վարողներին, նրանցից բեճիվ վերցնում:

— Այո, հ ե ն ց ն ո թ (շարունակությունը՝ 4-րդ էջում)

Մուշեղ Խայունց

«ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՍԲՈՂՋ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆԱԿԱԾ ԼԻՆԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՍՏԱԳՈՒՅՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎՐԱ»

22 ՆԳ նախարարության համակարգում իրականացվող բարեփոխումներն առնչվում են նաև կառուցվածքային ստորաբաժանումներին ու կառավարման ոլորտին: Շրջանների, քաղաքների ՆԳ բաժինների օպերատիվ ղեկավարման ու կառավարման արդյունավետության բարձրացման, հանցագործությունների դեմ տարվող պայքարում նրանց ուժերի, միջոցների համալիր օգտագործման և գործողությունների անմիջական կոորդինացման նպատակով հանրապետությունում ստեղծվել են ներքին գործերի ղեկավարվող վարչություններ: Դրանցից մեկն ընդգրկում է Սյունիքի տարածքը:

1992 թ. դեկտեմբերի 16-ին տարածաշրջանի ՆԳ վարչության պետ է նշանակվել Մուշեղ Բագրատի Խայունցը, որը

մինչ այդ՝ 1991 թ. հունիսի 17-ից, Գորիսի ՆԳ բաժնի պետն էր, ավելի վաղ՝ մոտ երեք տարի, Գորիսի ինքնապաշտպանության խորհրդի անդամը, Գորիսի երկրապահ վարչի ներառման արք:

Մեկվել է 1947 թ., Գորիս քաղաքում, ստացել է միջնակարգ մասնագիտական կրթություն, ամուսնացած է, ունի երեք զավակ: Մայիսի 28-ին՝ Հայաստանի պետականության վերականգնման 75-րդ տարելիցի օրը, ստացել է միլիցիայի փոխգնդապետի կոչում:

Ինչպե՞ս է ընթանում տարածաշրջանի ՆԳ վարչության կազմավորումը, ի՞նչ խնդիրներ է այն իրականացնում: Այս մասին է «Ձանգեզուր» քերթի աշխատակցի գրույցը Սյունիքի տարածաշրջանի ՆԳ վարչության պետ Մ. Խայունցի հետ:

ձր: Վարչության պետի շորտեղակալները, օրինակ, միլիցիայի երկարամյա աշխատողներ են:

Ընտրություն ենք կատարում նաև համապատասխան բնագավառների երիտասարդ մասնագետներին, ովքեր իրենց գիտելիքներով, գործնական հատկանիշներով կարող են արժանապատիվ կրթել միլիցիայի աշխատակցի բարձր կոչումը:

Համեմատաբար խիստ է վարչության կադրերին ներկայացվող պահանջը: Նրանք պետք է ի վիճակի լինեն ոչ միայն ինքնուրույն աշխատելու, այլև՝ վերահսկելու, աշակցելու բաժինների իրենց գործընկերներին:

Վարչությունը մեծամասամբ համարվից Գորիսի ՆԳ բաժնի հարվիչ: Դա չի նշանակում, իհարկե, որ բաժնի կառուցիկը կհանրապետական մակարդակի վերջին աշխատանքների առաջին օղակը, առաջին գիծը մնում են բաժինները:

— Ներքին գործերի տարածաշրջանի վարչությունների քաղաքացիական կառավարման արդյունքն առաջուր վիճակը-

ցույթ է սկսվել բաժինների, ծառայությունների միջև:

Ասածս հաստատելու, մեր աշխատանքը բնութագրելու համար ուղղում եմ մի քանի ցուցանիշ ներկայացնել:

Նոյեմբերի 1992 թ. հունվար-մայիս ամիսներին արձանագրվել է հանցագործության 353 դեպք, ապա 93-ի նույն ժամանակաշրջանում՝ 337: Եվ այս տարի գրանց բացահայտումը կազմել է 67,4, անցյալ տարի՝ 46,3%:

1992 թ. քրեական հետախուզության գծով արձանագրվել է 288 դեպք (բացահայտումը՝ 38,9%), այս տարվա նույն ժամանակարկից արձանագրվել են 26 դեպքով, իսկ բացահայտումը կազմել է 58,8%:

1992 թ. նվաճած ժամանակաշրջանում վտանգավոր հանցագործությունների բացահայտումը կազմել է 25%, 1993 թ.՝ 86,6%:

Անցյալ տարվա համեմատությամբ այս տարի 15-ով նվազել է սկսական գույքի հափշտակումը: Գրանց բացահայտումը կազմել է 31,1%, 93 թ.՝ 52%:

Գրեթե նույն վիճակն է նաև հանրապետության մյուս տարածքներում: Դա հաստատեց վերջերս Կամո քաղա-

յին համապատասխան գործային ստորաբաժանումներ, որոնք իրենց վրա են վերցրել պաշտպանական խնդիրները:

Այդ առումով միլիցիայի գործը թեթևացել է: Հիմա ոչ ոք չի խանգարում, որ միլիցիան զբաղվի իր հիմնական խնդիրներով:

Միաժամանակ, միլիցիայի և ոստիկանական կառույցների միջև հաստատվել է սերտ համագործակցություն:

Որոշ հարցեր, ավանդույթի ուժով, շարունակվում են լուծվել միլիցիայի միջոցով, նկատի ունեմ Ազրբեջանի սահմանակից շրջանների ներկայացուցիչների հետ կապի պահպանումը՝ անհրաժեշտության դեպքում, գերիների, զինվորականների, սահմանամերձում հողերի մըշակումը և այլն: Դրանք, թող անհամեստ չհնչի, պայմանավորված են գործող անձանցով, և ժամանակի ընթացքում նույնպես կլուծվեն զինվորականների միջոցով:

Մուշեղ Բագրատի, անցած տարում Գորիսի ՆԳ բաժնի, որի ղեկավարն էի գում, ֆանիցս ֆարկովել, ֆենդապովել՝ մասնավորապես Գորիսի ֆալիտորհրդում: «Պաշտոնական» կարծիքը

— Պարոն հայրուհի, քերթային մեկ գրույցում հնարավոր չէ ֆ և և ա ր կ ե լ մտահոգող բոլոր հարցերը: Սակայն մի քանի հարց, այնուամենայնիվ, չեն կարող շրջանցել: Ճանապարհների վիճակը նկատի ունեմ, նախ և առաջ: Ի՞նչ երաշխիք կա, որ մարդիկ նահապարհներին չեն քայլանվի, չեն կողոպտվի: Ինչպե՞ս կհասկացա ի՞նչ առաջ ձեռնեցամ հեռախոսային խոսակցությունից, այս պահին Մեղրիկապան ավանում աշխատում 65

—94 պետհամարանիշի «Նիվա» մեկնայով մի խումբ անձինք անարկելում են վարողներին, նրանցից բեճիվ վերցնում:

— Այո, հ ե ն ց ն ո թ (շարունակությունը՝ 4-րդ էջում)

# ԼՐՎԱԾ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԳՅՈՒՂԸ

Օրը հնձորեսկով սկսվեց: Հեռավոր խնձորեսկից Արիկին տեսած մանկապարտեզի խոհարարին, որից միշտ տապալիված վերմիշիկի հոտ էր փչում, և մանկություն տարիները վերհիշելիս կարոտով եմ մտաբերում նրան՝ մարդը, ճերմակ դոգանոցով, մեքերածոր զրույցը լեզվի ծայրին: Ու հիմա, երբ ազդեր ենրի ոճրագործ ձեռքով սպանվել է ամուսինը, սև շորերն այնպես շեն սազում նրան: Երբեմնի բարձրահասակ կնիք վշտից կորացած մեջքն էլ կարծես պարտադրում է, որ շրջես հայացքդ, փակես աչքերդ իրականության առջև և վերհիշես կրթմանի «հավան գլխին սված» հնձորեսկի աշխույժ առօրյան, նրա կախարդական լուսարացները, ճիվթարվես հիշողությունը ու էլ ալիկի անհաղանաթափած կարոտը արդեն չորս տարի հանդիսար կորցրած գյուղից հանդիսար Այլ առիթ լինեք, տատու կաներ՝ աչքով տվին: Տվին, բայց չտվին, ով էր տեսել համարյա նորակառուց գյուղի կողքին նոր գյուղ կառուցելու: Նոր ընտանիք կազմող խնձորեսկիցները շուրջ նալով հայրենի գյուղը լքել, իրենց Միջին Ասիան, Ռուսաստանը, գուբերկուլյունը հասցրին ձրն՝ ձորակից հարավ արևելք և նոր գյուղ հիմնեցին՝ ներքին հըն՝ ձորակի Հետո ինչ, որ կառավարություն համապատասխան ուրուշան մեջ գրվեց: Խնձորեսկի հողատարածությունները արդու նավետ օգտագործելու նպատակով... Փաստն այն է, որ շահել հարու ներն անսկեսուր գյուղ ուղեցին, ու կառուցվեց գյուղը: Տասը տարում այնտեղ բնակություն հաստատեց շուրջ քառասուն ընտանիք

եկավ ու իր մեքենայով նորաբնակներին գյուղ հասցրեց: Աչքալուսանքին պատասխանում է ոչ առանձին աշխույժամբ: Իդուր եմ փորձում կատակել: Զրույցին խառնվում է Հրաչիկը: «Ենչի՞ց ուրախանա, երբ նորածինները կեր էլ չունեն: Տնտեսությունից օրական անվճար երկու լիտր կաթ են տալիս»: Այդքանը: Ո՛չ խանութ կարել գնում կատարելու, ո՛չ կենցաղապատարկման որևէ կետ: Փոխարենը բազմազան մայրեր կան, և մինչ մենք մեր երեխաներին Գորիսի երկհարկանի տներին երևաններ ենք ուղարկում, այդ մայրերն իրենց երեխաների հետ բնակվում են Թուրքի հարևանությամբ: Մեկի կուլիին մի մեկ խփելու, առիթից՝ առիթ կոնֆետ գնելու համար Գորիս պիտի հասնեն՝ առանց ավտոբուս, ինչով պատահի (խակ գյուղի ճանապարհով վերջին ժամանակներին երթեկում է միայն տնտեսության տնօրենի «Վիլիսը», որը թե շտապ օգնության մեքենա է, թե՛ բանավորական ավտոբուս):

Հին խանութի շենքը գյուղի բնակիչները (որոնց միջին տարիքը չի անցնում երեսունից) իրենց ուժերով նորոգել են, միտք ունեն արձարան բացել, որ գոնև մի հավաքատեղ ունենան, թե չէ շարունակ հերթապահող, վաղուց գիշերվա ու ցերեկվա սահմանները խառնած տղաները առանց ուսուցիչի, հեռուստացույցի, կինոյի, թերթի ստանալու հնարավորության ոնց որ կտրված լինեն արտաքին

գոններն ու...  
— Կարելի է, չէ՞, սահմանամերձ գյուղերում բնակվողներին որոշակի արտոնություններ տալ, ասենք անվճար երթեկուցով իրավունք, յուրաքանչյուր երեխային մնացածներից տարբերվող նպաստ, կամ էլ՝ աշխատավարձից եկամբ տահարկ չբանձնել: Ասում է Սևնիկը և կարծես թե դեռ հույս ունի, որ կարող է ուղարկություն դարձնեն ասածին:  
— Ամբողջ օրը աշխատելիս աչքերն զմայցի սարին է, ուր թուրքերի հրետանին է տեղադրված: Տուն ենք գալիս, հեռուստացույց միացնում՝ էլի Ադրբեյջանն էլ Ափսոս է, որ մենք էլ մի հայկական համերգ լսենք, մի քիչ մոռանանք «գրագ» ու թնդանթ: Գուցե դիտմամբ չեն միացնում հայկական ծրագիրը, որ շսենք, թե ոնց են ազդվազում սահմանից դնացող լուրերը: Ասում են հեռուստացույցի աստղեր են դարձել արտաշատցիներն ու հրազդան ցինները: Նրանք, ովքեր կարծում են, թե Ձանգեղուրը իրոք աղբրեղանական հող է և փույթ չէ, ու կիրքեններ:

դարձած մարդկանց անմիջականությունից, միմյանց նկատմամբ տաժած ուշադրությունից: Ամաշում եմ իմ քաղցրություն հասնող չեմուշումից և ալիկ խոսք, չի ստացվում վարակվել նրանցից, բանդի այնքան բնական, անպատեղծ է կենցաղը, իրար հետ վարվելու ոճը: Եվ որքան չով դիտեն միմյանց հոգևոր, ուրախությունների մասին: Ձեն խոսում ոչ «գրագ», ո՛չ էլ պատերազմի մասին: Բոլորովին պետքներն էլ չի: Ուրախանում եմ, որ նրանք չըզուսեն, թե ինչպես ենք մենք Գորիսում մեր օրը սկսում տաղանալով, անգամ վշտի պահին դրանում այնչիլ հարևանին՝ բայց որ կրակեն: Ծահումը կոնյակ է լցնում աղջիկներին, առանց ձեռնակության խում է մի մի բաժակ, միմյանց աչքով անելով, ով գիտի ինչ են մաղթում: Հետո կուսիլը հայտարարում է, թե ուրշի է չորս երեխաներին էլ վարչական առնել, ու՞մից են պատահում: Պակաս, բիշ է մնում գոռամ ես, վարչական է ապրելու շահանքի:

## Կյանքը սահմանամերձ գյուղերում

և թվում էր, թե պիտի հավերժ վի երջանիկ կյանքը նորիսով գյուղի: Այդպես էր, բանի...  
Խնձորեսկով սկսվեց օրը: Ներքին հնձորեսկի պիտի գնամ: Կամ ինչ գնալ, խնձորեսկն իմ տունն է, և ես որդիարար ուրախանում եմ նրա հաջողություններով, տագնապում նրա անհանգիստ լուսաբացների համար: Ահա այդ պատճառով էլ տարակրտում եմ ներքին խնձորեսկի պետական տնտեսության տնօրեն Սուրբիկ Բեգլարյանի հեղանքից. ո՛ր բամբին է քեզ գյուղ բռնել: Այդ մասին ինձ ակնարկեցին նաև հետո, գյուղում: Իրոք, այն ինչ տեսա ուղիղ ձանապարհով 300 մ հեռավորությամբ Աղբուրբեջանին սահմանակից ներքին խնձորեսկում, վկայեց, որ բացի տեղաբնակներից հողիվ թե որևէ մեկը մտահոգվում է գյուղի կյանքով, հոգսերով, անգամ անվտանգություն:

աշխարհից: Վերջինիս հետ ունեցած միակ կապը տնտեսության զբաղմունքում տեղադրված հետախույզ է: Ու եթե գյուղում որևէ արտակարգ դեպք պատահի՝ ասենք թշնամու հետևից փորձի գյուղ խցկվել (աստված մի արասցե), մի քիչ հեռու լինես զբաղմունքից, շեռ կարող որևէ մեկին իմաց տալ:

Այդ հաստատեցին նաև Գորիսի պայմանագրային գումարտակում ծառայող և նույն օրը գյուղում հերթապահող խնձորեսկիցի տղաները, որոնց հետ այդպես էլ զրույց շտապվեց. «Թե՛ն ասենք, թե որ սկսենք ամեն ինչ իրենց գույներով պատմել, կկարծեք, թե թույլ ենք, արտոնում ենք»: Ինձ կրկին Բրաբանց Հրաչիկն է փրկում: Ի գեպ, նա ներքին հընձորեսկում չի ապրում, բայց իր տրակտորով քանի օր է օգնում է տնտեսությանը, և ինչպես ինքն է ասում՝ կմնա այնքան, որքան անհրաժեշտ է:

200 հեկտարը, մնացածը գտնվում է աղբիների բթի տակ: Տնտեսության այսպես ասած թեթևումը անասնապահությունն է, 200 զլուխ խոշոր եղջերավոր անասուն ու նեցող ֆերման այսօր գյուղի բլրե նակիչների հիմնական աշխատավայրն է: Օրական ստացվող 300 լ կաթը մշակվում է ֆերմային կից հարմարեցված մի սենյակում: Դա հնարավորություն է ստեղծում գյուղի բնակիչներին չապահովել անհրաժեշտ կաթնամթերքով, վառելիքի սղության պայմաններում խուսափել կաթը Գորիս հասցնելուց: Ավելին, ալիկի ամսին տնտեսությունը 860 հազար ուրու պանիր է իրացրել, դրանով աշխատողներին աշխատավարձ վճարել: Թե որքանով է օրինական այդ նախաձեռնությունը, այլ հարց է, բայց փաստ է, որ ստեղծված կացույցից գորս գալու էլը է գտնվել: Իր պատմության տալը տարիների ընթացքում տնտեսությունը չորս տնօրեն է ունեցել: Փոփոխություններին հաջորդող ժամանակաշրջաններում տուժել է տրեմտեսությունը: Այսպես, նախորդից հետո տնտեսությանը պատկանող սղարները «հանգրվանել են» խնձորեսկի անասնապահությանը: Հիմա տնօրենը մտադիր է դրանք

որ գյուղի համարյա բոլոր շինությունները հրետակոծությունից ալիկվել են և քանի որ դրանք հիմնականում կոմունալ շենքեր են, բնակիչները վնասի դիմաց որևէ գումար չեն ստանում, իսկ սեփական միջոցներով վերանորոգել շարունակում են ապրել կիսաբանդ, անտանիք տներում:  
Հրաժեշտին դժվարանում եմ միխիթարանի, հուսադրման որևէ խոսք գտնել: Եվ գուցե թե գյուղը դրա կարիքը չունի էլ, բանդի արհամարհած ամեն տեսակի անտաքերություն, ախոտավորություն, ապրում է ներքին խնձորեսկը, ապրում է սեփական ուժերով, մի ընտանիք դարձած: Նրա ամեն մի բնակիչ թե՛ հացթուխ է, թե՛ բուժօրույր, թե՛ գաշտավար, թե՛ սահմանապահ: Ծնորձակալ են նրանցից, ովքեր երբեք օգնություն ձեռք են մեկնում, չէ՛ կղա՝ ծից էլ գոհ են: Ետանդուն, սարի պես տնօրեն ունեն, հզոր ձեռքեր և իրենց հողը երբեք չլքելու կամբ:  
ՍՈՒՍԱՆՆԱ ՇԱՀԱՆՍՅԱՆ  
Գայիս, 1993 թվական  
2. Գ. 1. Գյուղ տանող ճանապարհին ներքին խնձորեսկիցների հանդիպելի: Զօրիակալանցված, բայց գյուղից ունեցող պատանալումը զոհված որդու համար հայրը գերեզմանի քար էր պատվիրում: Եվ նրանից պահանջում էին 200 հազար ուրու: Ասել է, թե հայրենիքը պաշտպանող, քսանը չըլորած պատանու մահը մի որոշների համար փող աշխատելու միջոց է: Սա՞ էլ հայրենասիրության դաս է:  
2. Գ. 2. Վերադարձին երեքամյա Անահիտին տիկնիկ խոստացած Կուլենայի կատարել խոստումս, բայց միայն այդքանը լքված հերթների գյուղին...

